Արձանագրություն N 2

«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2025-17» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «03» փետրվարի 2025 թ. ժամը 10:30-ին

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի.
Նախագահ՝
Անդամներ՝ Գ. Սաֆարյան, Ա. Սահակյան
Քարտուղար՝ Ա. Վիրաբյան
Բացակայում է. Կ. Չթչյան

Օրակարգ.

«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2025-17» ծածկագրով գնման ընթացակարգի բացման նիստի անցկացում և արդյունքների հաստատում

Ընդունել ի գիտություն, որ՝

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել և հիմնավորումներ չեն ներկայացվել:

1. **«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2025-17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի ներկայացման վերաբերյալ.**
   քարտուղարի կողմից 10:30-ին հայտերի գրանցամատյանը փակելուց հետո, նախագահը հրապարակել է նախահաշվային գները:
2. **Գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.**

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը
1.	«Մաքս Օիլ» ՍՊԸ	ք. Երևան, Էրեբունի, 12/4, հեռ. 060-75-67-51, e-mail: maxoil.llc@mail.ru
2.	«Ֆլեշ» ՍՊԸ	ք. Երևան, Ե. Կողբացու, 30, հեռ. 010-53-42-33, e-mail: flashltdtender@gmail.com

3. **Տվյալներ ծրարը կազմելու, ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին և բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**
   մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2025-17» ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:
   Փակ կնքված ծրարով ընկերությունները ներկայացրել են.
   - դիմում-հայտարարություն գնանշման հարցման մասնակցելու,
   - առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր,
   - գնային առաջարկ:

Վերոնշյալ կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 1 օրինակ պատճեններից, փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակիցների կողմից:

4. **Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի սահմանված պահանջներին համապատասխան կազմած լինելու մասին.**
   Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2025-17» ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

5. **Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ /ՀՀ դրամ/.**
   Ընթացակարգի հրավերով սահմանված կարգին բավարարող մասնակիցների գնային առաջարկները.

Հ/հ	Ապրանքի անվանումը	Հ/մ	Նախահաշվային գինը (ՀՀ դրամ)	Քանակ	«Մաքս Օիլ» ՍՊԸ		«Ֆլեշ» ՍՊԸ	
					Մասնակցի գնային առաջարկը առանց ԱԱՀ (ՀՀ դրամ)	Մասնակցի գնային առաջարկը ԱԱՀ-ն ներառյալ (ՀՀ դրամ)	Մասնակցի գնային առաջարկը առանց ԱԱՀ (ՀՀ դրամ)	Մասնակցի գնային առաջարկը ԱԱՀ-ն ներառյալ (ՀՀ դրամ)
1	Բենզին	լիտր	9,600,000	20,000	8,000,000	9,600,000	8,166,667	9,800,000
2	Դիզ. վառելիք	լիտր	1,960,000	4,000	1,633,334	1,960,000	1,666,667	2,000,000

6. **Գնահատման արդյունքների վերաբերյալ.**

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման արդյունքները ներկայացվել են գնահատման թերթիկում:

Որոշում.

1. 1-ն և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Մաքս Օիլ» ՍՊԸ ընկերությանը:
2. Մինչև 14.02.2025 թ. սահմանել անգործության ժամկետ, որից հետո պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնել՝ «Մաքս Օիլ» ՍՊ ընկերությանը՝ 11,560,000 /տասնմեկ միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ գումարի չափով, ներառյալ ԱԱՀ-ն:

Ընդունվել է որոշում՝
Կողմ՝ 2
Դեմ՝ 0

Ստորագրություններ.
Անդամներ՝

_____ Գ. Սաֆարյան

_____ Ա. Սահակյան

Քարտուղար՝ _____ Ա. Վիրաբյան